ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Սոֆիայում, Ազգային Ժողովը մարտի 1-ին, ընդունել է կառավարութիւնից առաջարկուած նոր օրինագիծ, որի զօրութեամբ Ռուսաց, Աղէքսանդր Նևսկու անունով կառուցած, եկեղեցին անցնում է բոլգարական պետական գանձարանին՝ իբր սեփականութիւն և վերակոչւում է իրենց առաջին լուսաւորիչների՝ Կիրիլի և Մեթոդիյի անունով։ Ապա, այդ օրինագիծն ընդունուելուց յետոյ, կառավարութիւնն առաջարկել է բոլգարական Սինոդին կարևոր միջոցներ ձեռք առնել, որպէս զի այսուհետև բոլգարական եկեղեցին ս. Միւռոնը չստանայ Ռուսաստանից, այլ ինքը պատրաստէ, քանի որ բոլգարական եկեղեցին ևս ինքնավար է։ Կառավարութիւնը մուծել է և մի այլ օրինագիծ, որով Յուլիանեան օրացոյցը փոխարինւում է Գրիգորեանով, պատճառաբանելով Բոլգարիայի և արևմտեան Եւրոպայի ունեցած վաճառականական և ելևմտական զանազան յարաբերութիւններով։ Պատճառաբանութեան մէջ մատնացոյց է անում և այն հանգամանքը, որ կառավարութիւնն ինքն զգում է այն դժուարութիւնները, որ այդ կարգադրութեամբ մեծ փոփոխութիւն պիտի առաջ գայ հոգևոր հաստատութիւնների վարչութեան մէջ, ուստի և ինքն ամեն ձեռնտուութիւն ցոյց կը տայ Բոլգար հոգևորականների մէջ այդ առթիւ տարակոյսներն ու երկիւղը վերացնելու համար։ Այդ կարգադրութիւնների հետևանքն այն կլինի, որ Բոլգարական ինքնավար և անկախ եկեղեցին այսուհետև ոչ մի կախումն չի ունենայ ուրիշ այլ եկեղեցուց և կդառնայ առանձին և անկախ եկեղեցի։

ԱՄԵՐԻԿԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ.

Ամերիկայում Հայանպաստ շարժումն աւելի և աւելի լայն խաւեր է գտնում հասարակաց ամեն շրջանում։ Վերջերս, ի նկատի ունենալով, այն ահռելի չափերը, որ Հայկական անվերապահ ջարդերն անարգել կատարում են Տաճիկ կառավարութեան ձեռքով, այնտեղ կազմուել է «Հայանպաստ Յանձնաժողով», որ մի դիմում է արել Ամերիկացիներին, ուր ի միջի այլոց կարդում ենք.—

«Մի յատուկ մասնաժողով քննութեան առաւ Լորդ Բրայսի այն առաջարկը, թէ անպաշտպան Հայերը,—կանայք, երեխաներ,